ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1707 16.05.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 13-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ արձանագրեց մի շարք խախտումներ:

1. Ջ.Ա.-ն և Ա.Բ.-ն 25.04.2017թ-ին հաջորդաբար ժամը 18.00-ին և 18.30-ին որպես ձերբակալված ընդունվել են ՁՊՎ: Նույն օրը՝ կրկին հաջորդաբար, ժամը 20.50-ին և ժամը 20.55-ին տեղափոխվել են ՔԿՀ:
2. Հ.Հ-ն ՁՊՎ է ընդունվել 07.03.2017թ-ին ժամը 09.30-ին և նույն օրը ժամը 15.50-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Հրազդան>> ՔԿ հիմնարկ:
3. Կ.Մ.-ն 17.02.2017թ-ին ժամը 23.40-ին ընդունվել է որպես ձերբակալված ՁՊՎ, 18.02.2017թ-ին ժամը 15.20-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Արմավիր>> ՔԿ հիմնարկ:

Չորս դեպքում էլ ներկայացած անձիք ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում խցերից դուրս չեն բերվել և մինչ ՔԿՀ տեղափոխվելը դատարան չեն տեղափոխվել խափանման միջոցի հարցը քննարկելու նպատակով: Առանց կալանավորման որոշման նրանք բոլորն էլ տեղափոխվել են ՔԿՀ:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Ս.Իսկանդարյան

3296
17 05

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

2390
17 05 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-2014 «12» 06 2017թ.

Ձեր 16.05.2017թ. թիվ 2621/1707 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Ս.Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2017թ. մայիսի 13-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում ՀՀ ոստիկանություն ներկայացված ընթացիկ հաշվետվությունում նշված հանգամանքն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Արարատի մարզային վարչությունում, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

- 1-ին և 3-րդ կետերով նշված՝ Ջ.Ա-ի, Ա.Բ-ի և Կ.Մ-ի նկատմամբ առկա են եղել ազատազրկման վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռներ, սակայն վերջիններս խուսափել են պատժի կրումից, ինչի համար նրանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Նշված անձինք հայտնաբերվել և որպես հետախուզվող անձինք ՀՀ քր. դատ. օր-ի 259-րդ հոդվածի համաձայն ձերբակալվել ու ընդունվել են ՁՊՎ: Այդ մասին իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին (դատարանին), որից հետո նշված անձինք ՁՊՎ-ից տեղափոխվել են ՀՀ ԱՆ <<Արմավիր>> ՔԿՀ:

- 2-րդ կետով նշված Հ.Հ-ն նույնպես ՁՊՎ-ից դատարան չի տեղափոխվել, քանի որ նրա նկատմամբ դատարանի կողմից կայացվել է կալանքի որոշում և որոշման մեջ նշվել է, որ կալանավորին պահել ոստիկանության Արտաշատի ՁՊՎ-ում մինչև ՀՀ ԱՆ <<Հրազդան>> ՔԿՀ տեղափոխելը: Հ.Հ-ն կալանավորի կարգավիճակով ընդունվել է ՁՊՎ, որից հետո տեղափոխվել է ՔԿՀ:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ